ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կը հրատարակենք հոս նախ Ն. Ս. Պիոս ԺԲ. Սրբազան Քահանայապետի հեռագիրը։

Città del Vaticano 18 Ottobre 1947.

Sua Santità presente con paterni voti opportuna celebrazione centenaria periodico « Pazmaveb » compiacendo perseverante attività benemerito organo Mechitarista e formulando voti sempre più felici incremento a servizio religione e pietà cristiana invia di cuore a tutti propiziatrice nuovi lumi e favori celesti invocata benedizione.

MONTINI, sostituto

Պէյրութ 16 Սեպտեմբեր 1947.

Ա. Գերյարգելի և Գերապայծառ
Հ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան, Ընդհ.
Աբբայ Մխիթարեան Միաբանութեան

Ս. ՂԱԶԱՐ

Գերյարգելի Գերապայծառ Աբբահայր,

Հաճոյքով ընդունեցանք 26 Օգոստոս թուակիր և թ. 205-9-47 Ձեր պատուականը, որով կ'աւետէիք « Բազմավէպ »ի հարիւրամեակի կատարումը յառաջիկայ Հոկտեմբերին և աղնուօրէն հրաւէր կ'ուղղէիք միանգամայն Մեզի ներկայ ըլլալու և նախագահելու յոբելինական հանդէսներուն։

Շնորհապարտ ենք Ձեզի և Յարգելի Միաբանութեանդ այս որդիական մատուցումին համար։ Այլ մեծապէս կը ցաւինք որ պարագաները կը ստիպեն զՄեզ զրկուելու Ձեր մէջ գտնուելու հաճոյքէն այս բարեպատեհ առիթին։

Ուրախ ենք սակայն իմացնելու որ Արհի Պետրոս Արքեպիսկոպոս Քէսիճեան, Տիւղոսաւոր Կողմնիոյ Հայոց, պիտի ներկայացնէ զՄեզ Յոբելինական հանդէսներուն։

Ձեզի ծանօթ է թէ որքան մօտ է մեր սրտին Մեծին Մխիթարայ Տունը իր դարաւոր գործունէութեամբ և հառագայթումով, որուն շառաւիղներէն մին եղած է և կը մնայ Հայ Մամուլի երիցագոյնը « Բազմավէպ »։

Ամբողջ դար մը ան, լուսացնցուղի նման, սփռեց ամենուրեք, Ազգիս զաւակներուն մէջ, նշոյլներ փառաբաշխուած Ս. Կրօնի, Գիտութեան, Ազգի և Հայրենիքի շահերով, և հանդիսացաւ արժանաւոր ծնունդ Լուսաւորչի սերունդին և ջահ մշտավառ մայրենի լեզուին։

Խանդավառօրէն կը խնդակցինք Միաբանութեանդ լուսափիւռ այս ձեռնարկին երկրորդ դարամուտի առթիւ։ Կը մաղթենք ջերմապէս որ « Բազմավէպ » հասնի ուրիշ Յոբելինական տօներու, շարունակելով միշտ հաւատարիմ ըլլալ իր բարձր առաքելութեան՝ արծարծ պահելու Ազգիս մէջ վսեմ գաղափարականները որոնք ազատ, հարատաև և աստուածապաշտ Հայուն ներշնչարանը, նեցուկն ու պարծանքն եղած են տասնեակ դարերէ ի վեր։

Մաղթելով միանգամայն բարեյաջող ելք Յոբելինական հանդէսներուն՝ կ'օրհնենք ու կ'ողջունենք բոլոր պատուական հանդիսականները և Միաբանութեանդ Վերապատուելի Հայրերը գլխովին։

Ընտրելագոյն հայրական սիրոյ և օրհնութեան ողջունիւ և Ձեզ՝ մնամք
Գերյարգելի Գերապայծառ Տէրութեանդ աղօթարար

Կարդ. ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ
Կաթ. Պատրք. Տանն Կիլիկիոյ

SACRA CONGREGAZIONE
PRO ECCLESIA ORIENTALI

Roma, 13 Ottobre 1947.

Prot. 551 / 42

Reverendissimo Padre,

Ben volentieri avrei accolto il Suo gentile invito, che mi avrebbe permesso, non soltanto di partecipare alla centenaria Commemorazione della Rivista armena « Pazmaveb », ma altresì di godere della cortese ospitalità di codesto Cenobio e di mettermi, ancora una volta, a contatto con codici ed incunaboli, che, con felice idea, si è voluto ora esporre alla visione del pubblico.

Purtroppo ragioni di ufficio mi impediscono di lasciare Roma. Voglio però essere spiritualmente presente, anche a nome di questo S. Dicastero, alla solenne commemorazione per felicitarmi con la Congregazione Mechitarista di S. Lazzaro per il lavoro compiuto e per auspicare rinnovate energie nella fatica che sempre attende i redattori e collaboratori della Rivista.

La quale, in questa centenaria ricorrenza, appare più che mai una face che viene tramandata di generazione in generazione per tenere desta l' attenzione di quanti amano la cultura armena; vuole essere un richiamo continuo alla Patria, dove convergono sempre e sguardo e cuore di tutti gli Armeni sparsi nel mondo; un vincolo di unione per quanti vivono secondo quella fede cristiana che è alla base di tutta la poesia e di tutta la civiltà e di tutta la cultura armena.

Nel sereno bilancio di lavoro, che la ricorrenza centenaria permette a tutti i Monaci di poter fare, riappaia in essi il proposito migliore di voler custodire fedelmente quanto i Confratelli hanno così ben stabilito, di voler anzi migliorare, adottando metodi e sistemi, anche tipografici, alle nuove esigenze del momento, affinchè la Rivista « Pazmaveb » possa continuare nella sua provvidenziale opera.

Mi valgo ben volentieri dell' occasione per rinnovare i miei religiosi ossequi e per confermarmi della Paternità Vostra Rev.ma

dev.mo nel Signore
✠ EUGENIO Card. TISSERANT, Segr.

Rev.mo Padre
P. SERAPIONE ULUHOGIAN
Abate Generale
della Congregazione Mechitarista
San Lazzaro *Venezia*

ANT. ARATA Arciv. di Sardi, Assessore

digitised by A.R.A.R.@

Venerabilis Pater,

Absens quidem corpore, interero tamen spiritu vestris sacris celebrationibus, in bonum quae vergant Congregationi Mechitar Patris, et inclyti populi Armeni.

Dominica 18 Octobris sacris vacandum mihi est Ordinationibus.

Pro me orate, et qui adhuc humilis Abbatis S. Pauli meminerint, in X° salutate. Valete omnes in Christi dilectione.

HILDEPHONSUS Card. SCHUSTER

Mediolani, Nonis Octobris MCMXLVII

Առ Գերապայծառ Գերյարգելի Հայր
Հ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան
Ի ՎԵՆԵՏԻԿ

Գերյարգելի Գերապայծառ Հայր,

Մեծ հաճոյքով կարդացի Ձեր 24 հոլովեալ Սեպտեմբերի 1947ի յարգելի նամակը, որով գերազնիւ ազնուութեամբ և սիրով կը հրաւիրէիք և զիս ներկայ ըլլալու ի սուրբ Ղազար, ի Վենետիկ, տեղի ունենալիք հանդիսին, եկեղեցական, գրական, երաժշտական տօնակատարութիւններուն «Բազմավէպ» ամսագրի հարիւրամեակին համար։

Մեծապէս գոհ և շնորհապարտ եմ Ձեր ազնիւ ուշադրութեան։ Սակայն վերահաս ծերութիւնս և անոր յարակից հանգամանքները վարանել կու տան, ապա թէ ոչ սիրով և խանդավառութեամբ պիտի ուզէի այդ սրտիս մօտ եղող մեծ հանդիսին ներկայ ըլլալ և ըմբոշխնել զայն։ Ուրեմն առ այժմ ոչ այո՛ և ո՛չ ոչ կրնամ ըսել Ձեր գերազնիւ հրաւէրին։ Եթէ կրցայ մէկ երկու օր յառաջ այդր ի սուրբ Ղազար կը ժամանեմ, եթէ ոչ նշան է որ չպիտի կարենամ գալ։ Եթէ երբեք չկարենամ գալ, ի հեռուստ կը վայելեմ այդ կրօնական և ազգային հանդէսը, աղօթելով որ պատուական «Բազմավէպ» հանդիսաբանը ինչպէս յընթացս հարիւրամեայ երկարաձիգ և դժպհի հանգամանաց մէջ եւս սիգապանծ ի բարին և յուղիղն ընթացաւ և փայլեցաւ իբրեւ ջահ լուսապայծառ իրեն մեծ պողոտային վրայ, և ռահահորդ Ազգիս ի լոյս ճշմարտութեան, երկրորդ հարիւրամեակի սկզբնաւորութեան և ընթացքին աւելի մեծ թափով ըլլայ սուրբ Կրօնքի և Ազգիս բարգաւաճանք և լոյս, մեր սիրելի Ազգի զաւակներուն և այս ի պարծանս Մեծի Մխիթարայ պանծալի Միաբանութեան։

Հուսկ ամենայնի մաղթելով Երկնից Օրհնութիւն համայն աստուածապահ Ուխտիդ և Ձեր իսկ գլխովին, որ գործով և արդեամբ ցոյց տուիք թէ պարծանք էք Միաբանութեանդ, խորին մեծարանաց և յարգանաց հաւաստեօք և եղբայրական ողջունիւ մնամ Ձեզդ խոնարհ աղօթակից

✠ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Տիտղոսաւոր Քաղկեդոնի

Հռոմ, 1 Հոկտեմբեր 1947

Ցետ պաշտօնական անձնաւորութեանց շնորհաւորական նամակներուն, կը հրատարակենք հոս թուականի կարգով խմբագրութեանս ուղղուած շնորհաւորական ուրիշ նամակներ։

Գահիրէ 21 Փետրուար 1947.

Պատուարժան Կարգադիր Յանձնախումբ
«Բազմավէպ»ի հարիւրամեայ տօնակատարութեանց

Գերաշնորհ Հայրեր,

Մամուլն ու կրթական հաստատութիւնները, լուսագոյն ազդակներն են ժողովուրդի մը ինքնագիտակցութիւնը հրահարող ու անոր զարգացումին և յառաջադիմութեանը սատարող։

Մխիթարեան Ուխտը դիտցած է համապրել զանոնք, առաւելագոյն չափով օգտուիլ անոնցմէ, ու այսպէսով արժանանալ հայ ազգին անսահման և յաւիտենական երախտագիտութեանը։

Դարադարձիկ տօնակատարութիւնները կը մարմնացնեն բեղուն ճիգի, հաւատքի և յարատեւ զոհաբերութեան արդար և փառապանծ վարձատրութիւնը։

Մօտաւորապէս տասը տարի առաջ, դուք արժանավայել կերպով փառաւորուեցաք Ձեր կրթական բեղմնաւոր գործունէութեան հարիւրամեակովը. այսօր կարգը Ձեր մամուլինն է՝ «Բազմավէպ»ինը՝ որուն միջոցաւ դարէ մը ի վեր կը ճգնիք բոլորանուէր կերպով նպաստել մեր անցեալի ու ներկայի մշակոյթին։

Այդ պարբերաթերթը դարձած է շքեղ յուշարձանը Ձեր Մենաստանին, ու բեղմնաւոր խթանը՝ մեր ազգային հոգեկան և իմացական լուսագոյն նուաճումներուն։

Անով կը փառաբանուին ոչ միայն Զամիչեանները, Բագրատունիները, Հիւրմիւզները, Ամիչանները, Ղազիկեանները, Հացունիները ու Մխիթարեան շատ մը ուրիշ արժէքաւոր հայրերու ընտանին, այլ նաեւ ամբողջ ազգը։

Դարէ մը ի վեր, անոր էջերուն մէջէն, հայը կը լսէ արձագանգը իր նախնեաց հոգեկան ու իմացական պատգամներուն, ու կ'ոգեւորի անոնց գիւթական հրապոյրովը։

Հոն է որ կը պեղուին անոնց կողմէ մեզի աւանդ ձգուած գանձերը, ու մուտացութեան փոշիին տակէն լոյս աշխարհ կը բերուին մեր դարաւոր թանկագին ժառանգները։

Այդ էջերուն մէջէն է որ տեւականօրէն կը հրահարուի հայագիտութիւնը, մշականդօրէն կը պաշտպանուի հայ լեզուն ու ոգին, և նոր նուաճումներով կը բեղմնաւորուին ու կ'արգասաւորուին մեր գրական, գեղարուեստական ու իմացական անդաստանները։

Սիրելի հայրեր, թող հարիւրամեակի այս շքեղ տօնակատարութիւնները Ձեր արժանի դափնեպսակը ըլլան, ու համակ հայութեան համակրանքն ու գնահատանքը՝ բեղմնաւոր խթան մը Ձեր ապագայի նուաճումներուն ու ազգօգուտ գործունէութեանը։

Իբրեւ Մ. Ռ. նախկին սան մը, և ձեզմով ոգեւորուող ու հպարտացող հայ մը, այս պահուս, անհուն երջանկութիւնը կը զգամ ջերմագին շնորհաւորութիւններս յայտնելու Ձեզ, մաղթելով որ Մխիթար Աբբահօր լուսաւոր կանթեղը միշտ վառ մնայ ու լուսաւորէ հայ ազգին անցեալը, ներկան ու ապագան։

Կրկին ու կրկին, Ձեզ յաջողութիւն մաղթելով, խնդրեմ, հաճեցէք ընդունիլ լուսագոյն զգացումներուս և ամենախորին յարգանքներուս հաւաստիքը։

Երախտապարտ սան Ձեր
Տոքթ. Պ. ՄԻՍԱՔԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Թէհրան 24 Յուլիս 1947.

Գերաշնորհ Հ. Մեսրոպ Ճանաչեան
Վենետիկ – Ս. Ղազար

Սիրելի Հ. Մեսրոպ,

... Հայ մամուլի պատմութեան մէջ «Բազմավէպ»ի 100-ամեակն աննախընթաց երեւոյթ է։ Դա հայ թերթի փայլուն յաղթանակն է որը պատիւ է բերում ոչ միայն Վենետիկի Մխիթարեան հայրերին, այլ և հայ ժողովրդին։ Ամսագրի բովանդակութիւնն այսօր առանձնապէս արժէքաւորւում է նրանով, որ այնտեղ տեսնում ենք հայոց լեզուի, պատմութեան, արուեստի, գիտութեան, գրականութեան և, վերջապէս, կուլտուրայի շատ արժէքաւոր էջերը, որոնք այսօր էլ առանձին հետաքրքրութեամբ կարդացւում են և ունին մնայուն արժէք։ «Բազմավէպ»ի հրատարակութեան 100-ամեակի շրջանում շատ հայ թերթեր և ամսագրեր են լոյս տեսել, բայց չեն կարողացել երկար ապրել։ «Բազմավէպ»ը միշտ մնացել է իր դիրքերում և իր կոչման բարձրութեան վրայ։ Եւ դա շնորհիւ Մխիթարեան վաստակաւոր հայրերի աննկուն ոգու, տոկունութեան և աշխատասիրութեան։ Ահա թէ ինչու ջերմագին շնորհաւորում եմ ամսագրի 100-ամեակը և նրան խմբագրող լաւագոյն դրօշակակիրներին, որոնք իրենց քրտնաջան և բեղմնաւոր գործունէութեամբ մի նոր էջ բաց արին հայ մամուլի պատմութեան մէջ։ Միաժամանակ սրտանց ցանկանում եմ Ձեզ նոր ոյժ, եռանդ, էլ աւելի լաւագոյն հիմքերի վրայ դնելու ամսագրի հրատարակութեան վեհ գործը։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Dr. Ing. ARMANDO SARIAN

Milano il 1-10-47.

Onorevole Redazione del «Pazmaveb»

Venezia
Isola S. Lazzaro degli Armeni

Non potendo, causa impegni professionali, partecipare personalmente ai festeggiamenti in occasione del centenario del «Pazmaveb», prego codesta On. Redazione di gradire i miei vivi rallegramenti coll'augurio di vedere il «Pazmaveb» primeggiare sempre nella sua alta missione, così degnamente compiuta attraverso un secolo, grazie all'opera infaticabile dei Rev. Padri Mechitaristi.

Con molti cordiali saluti.

Ing. A. SARIAN

Ֆիլատէլֆիա 1 Հոկտեմբեր 1947.

Պատ. խմբագրութիւն «Բազմավէպ»ի

Ցարգանքի խոնարհ բաժին մըն ալ ընդունեցէք իմ կողմէս «Բազմավէպ»ի հիմնադրութեան հարիւրամեակին առթիւ։ Հոգիով Ձեր հետ եմ և հաղորդակից՝ այն հպարտ զգացումներուն որոնցմով համակուած էք տօնելու ատեն դարի մը վիթխարի յաղթանակը։

Ի՜նչ հսկայ ծառայութիւն մատուցիք մեր ժողովրդին գրականութեան և մշակոյթին սերունդներ կամրջող այդ ժամանակամիջոցին մէջ։ Ի՜նչ թանկագին գոհարներով լեցուցիք մեր ժողովուրդին քաղաքակրթութեան գանձարանը։ Եւ որպիսի՜ խորունկ հաճոյքով նուիրումով և յարատեւութեամբ։

Եւ այսօր ալ Աւիշաններու, Բագրատունիներու և Ղազիկեաններու զմայլելի աւանդութիւնները կը շարունակէք նոյն ոգեւորութեամբ, ձեռնհասութեամբ և հայրենասիրութեամբ։

Պատանեկութենէս ի վեր «Բազմավէպ»ի ընթերցումը հոգեկան անսպառ հաճոյքի աղբիւր մը եղած է ինծի համար։ Իսկ վերջին տարիներուն գրական աշխատակցութիւնս անոր՝ աւելի եւս կապեց զիս Մխիթարեաններու հոյակապ հաստատութեան և իր անզուգական հրատարակութեան հետ։

Թող վերջ չունենայ Ձեր շինարար գործը և օրհնեալ ըլլայ Մխիթար Աբբայի անմահ յիշատակը։

Կորով ու երկար կեանք կը մաղթեմ Ձեզի սիրելի հայրեր։

Խորունկ յարգանօք

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Աղեքսանդրիա 8 Հոկտեմբեր 1947.

Գրնիր Հ. Մեսրոպ վարդապետ,

Կը ցաւիմ որ ինծմէ անկախ պարագաներու բերմամբ ու պատճառաւ չկրցայ երկար ժամանակէ ի վեր ո՛և է նամակ գրել. կը յուսամ որ ներողամիտ կը գտնուիք։

Սակայն իմ մասին կը համարիմ թէ Վեր. Հ. Զրաքեան տուած ըլլայ Ձեզի լայն տեղեկութիւններ և ըսած թէ՝ ինչպէս հոս, կը չանամ քարէն ջուր հանել, Նեղոսէն՝ մշակոյթ, աւազներէն՝ մասնագիտութիւն։ Թերեւս յաջողիմ, յամենայն դէպս, պայքար մ'է այս և լաւ է պայքարիլ երբ հեռուն կայ հմայող գաղափարական մը և ներսդին՝ կարողութիւն և վճռականութիւն այդ իտէալին տիրանալու։ Այս մասին ուրիշ անգամ։

Ձի տօն է այսօր, տօն է ցնծութեան ու սիրոյ Մխիթարեան ընտանիքի երդիքին ներքեւ. ինչպէս ամէն առթիւ թող զանգակները զօղանջեն և առ Արարիչն բարձրանայ իրենց մեղեդիներու ընդմէջէն գոհաբանութեան աղօթք մը։

«Բազմավէպ»ը դարաւոր է։

«Բազմավէպ»ը կը նշանակէ դար մը։ Որքան ժիգոյն սահմանում դերի մը որ իր կարեւորութեամբ և ազդեցութեամբ, այսօր մեր և նաեւ օտարներու անզուսպ և արդար հիացմունքի առարկայ է։ Եւ ինչպէս չզմայլիլ ի տես այն հունձքին, գրական, գեղարուեստական և մշակութային երկերու զոր «Բազմավէպ»ի շնորհիւ և պատճառաւ մեզի հասած է դարուայ մը կեանքին։

Ստուգիւ, «Բազմավէպ»ը ինքն իր մէջ կը բովանդակէ բոլոր դարուայ մը պատմութիւնը. դարուայ մը փորձերը, յուսադրիչ առաջադրութիւնները, գրական տիտաններու և անկորնչելի գեղեցկութեան երկրպագուներու, իւրացնելով էջեր, և այդ էջերու ընդմէջէն յոյզեր և յուզումներ, մարգրիտներ, որոնք յետոյ, այդ տիտաններուն մահուամբ դացին գրաւեցին իրենց տեղը դավնեպսակին շուրջ։ Ինչպէս իր անունը կը նշանակէ, բազում վէպեր, վէպեր սիրոյ և ցաւի, վէպեր յոյսի, վէպեր մեր փառապանծ Անցեալէն և յուսադրիչ Ապագայէն։

digitised by A.R.A.R.@

Եւ որքան գուրգուրանքով, գորովով Մխիթարեան Միաբանութիւնը իր իսկ մարմնէն ծնունդ առած « Բազմավէպ »ին տուաւ և ջերմութիւն և աճելու ու իր արդի բարձունքին հասնելու նպաստաւոր պայման և կենսանիւթ։ Քանի քանի Մխիթարեան մտքեր տիւ և գիշեր հակեցան անոր վրայ ու աքնաջան աշխատութեամբ տուին անոր և գեղեցկութիւն և փայլ և վայելչութիւն և մանաւանդ իրաւասութիւնը պարծանքով կրելու իր տիտղոսը « Անդրանիկ թերթ արդի հայ լրագրութեան »։ Արդարեւ, « Բազմավէպ »ի հարիւրամեակը հանդրուան մըն է, պահ մը, տուիթ մը, յետադարձ ակնարկ նետելու հայ լրագրութեան վրայ, յետադարձ ակնարկ՝ որուն անմիջակայ ակներեւ եզրակացութեան առաջին կէտը պիտի ըլլայ անտարակոյս փառաւորումը « Բազմավէպ »ի։

Ահա այս առթիւ և այս բոլորին գիտակցութեամբ կը միանամ, սիրելի Հ. Մեսրոպ, Աղեքսանդրիոյ գրասէր համայնքին սրտաբուխ մաղթանքներ հիւսելու և խնդրելու Ամենակարողէն որ Ձեր և Ձեր յաջորդներու խմբագրութեամբ և Մխիթարեան ընտանիքի Ցարկին և մտերմութեան մէջ, « Բազմավէպ »ը ապրի երկար, ապրի յաղթութեան և լոյսի օրեր անընդհատ ժամանակագրելով մեր Հայրենիքին և մեր Մխիթարեան Միաբանութեան լուսաշող և պերճափայլ Ապագան։

Ձեր Ս. Սէր համբուրող
ՅԱԿՈԲ ԱՆՍՈՒՐԵԱՆ

Միլան, 10 հոկտեմբեր 1947.

« Բազմավէպ »ի մեծարգոյ խմբագրուհեան
Վենետիկ

Աւղջութեանս պայմանների բերմամբ ի վիճակի չըլլալով անձամբ ներկայ գտնուելու յառաջիկայ տօնահանդէսին, այսու կու գամ, թէ իրրեւ համակիր և թէ հասարակական համեստ գործիչ, իմ սրտագին շնորհաւորութիւնները և ջերմ բարեմաղթութիւնները բերելու բազմաշխատ և վաստակաւոր ամսագրիդ, որ ամբողջ մէկ դար իր լուսապիւռ և բեղմնաւոր գործունէութեամբ ծառայեր է ի սպաս հայ մշակոյթի՝ լեզուի և գրականութեան։

Հարիւր տարի հայ պարբերականի մը համար մեծ և հազուագիւտ յաղթանակ կը նշանակէ և « Բազմավէպ »ը ծառայեր է ոչ միայն մեր յառաջադէմ դասական հեղինակներին, ինչպէս Ալիշան և կարգ մը ուրիշներ, այլ անոր էջերը հաւասարապէս բաց են եղեր միշտ նաեւ սկսնակ գրողներին։ Այսպիսով, քաջալերելով այս վերջինները, միջոց տրուած է անոնց առաջ գալու և զարգացնելու իրենց մտաւոր-գրական կարողութիւնները։

Կրկին անգամ ողջունելով Հայ վերերաւ օրկանի յաղթական յոբելեանը, յարատեւութիւն և յառաջադիմութիւն կը մաղթեմ « Բազմավէպ »ին իր դժուարին և փշոտ ճամբուն վրայ գերարժանի Միաբանութեանդ ղեկավարութեան տակ։

Միշտ լի յարգանքներով
Տամ Ց. ՓԻԼՈՑԵԱՆ

Փարիզ 11 հոկտեմբեր 1947.

Գերյարգելի Հայր Ճանաչեալ
խմբագրապետ « Բազմավէպ »ի.

Հարիւրամեակը « Բազմավէպ »ին։ « Բազմավէպ »...։ Մեր պատանեկութեան երազներուն մէջ ան կու գար մեզի աւետաբեր աղաւնիի մը հանգոյն Ս. Ղազարու կղզիէն,

հետը բերելով բոլոր թովչանքը ջուրէն ելած քաղաքին, վարդերանգ մարմարէ պալատներուն ցոլացումը ծոցին մէջ։ Կը թուէր մեզի լսել լուսնի լոյսով, ճոպիւնը ու կօնտոլներուն թեւճակներուն ու ցայդերգեր՝ դիւթիչ, լարաւոր գործիներու վրայէն թրթռացող։

Հրաշավէպի մը բոլոր կախարդանքով օծուն աշխարհ մը, Վենետիկը, ոստան մը լոյսի, ջուրի, բանաստեղծութեան։ Դուքսերն ու դքսուհիները ոսկեճամուկ հագուած, կը ժպտէին մեզի, կը խօսէին բարբառով մը որ երաժշտութիւն էր և մեր քունին պահերուն իսկ, անոնք ամէնքը կարծես կ'ապրէին մեր շուրջը « Բազմավէպ »ին էջերուն մէջէն ընդնշմարուած։

Ու աշունը, Կապրիէլ Տ'Անունցիոյի երգած Վենետիկի աշունը, իր կարմիր նուռերով բեռնաւոր նաւակներովը մեր երեւակայութեան գերընտրած եղանակն էր, որովհետեւ քերթողներ փառաբանած էին, անմահացուցած Վենետիկի աշունը, ու երեկոյեան՝ ժգուռնած սանդուխներուն վրայ ծնրադիր, մեր հոգիները ունկնդրել կը տենչային Ս. Մարկոսի զանգակատան զոռ զանգիւններուն։

Հմայքը Վենետիկի, մանաւանդ հմայքը Ս. Ղազարու կղզիին, հեշտիւ օրօրած է մեր ուսանողութիւնը, մանաւանդ տաղերովը ոսկեայ քնարով քերթողահօր։

Հայր Ալիշան պաշտամունքը եղած է մեր պատանութեան, անոր հրաթեւ հոգին, ճախրելով ծովերուն վրայէն, եկած թառած է մեր գլխուն վերեւ, արեւու ճառանչի մը պէս, և մեզի ուսուցած լուսապայծառ հրաշալիքը բանաստեղծութեան։

Անոր հայրենատենչ քերթուածները հրդեհած են մեր սրտերը և հոն վառած նուիրական սէրը հայրենիքին. իրեն հետ լացած ենք անոր սուգերուն վրայ ու պարծենցած անոր փառքերովը ու « Հայոց աշխարհ »ը եղած է մեզի երկրպագելի սրբավայր մը։

« Բազմավէպ »ը իր թերթերուն մէջ մեզի համար միշտ շունչ մը պահած է խնկելի Նահապետէն և մեզի չէ հնար չոգեկոչել ալեծաղիկ գլուխը անոր, ձեռք առած պահերնուս ամսաթերթը մեզի սիրելի։

Հարիւր տարի ...։ Դար մը բեղուն աշխատութեան, աննկուն մաքառումի և ցանկալի յարատեւութեան։ Խոնջէնք ու յաղթանակ։ Մաքի շողեր ծորուած կայլակ առ կայլակ անընդհատ։ Մաքի մշակներ աստուածային շունչով առլցուն, վայրահակ դար մը սպիտակ էջերուն վրայ։

Կը մաղթեմ դեռ շատ հարիւր տարիներ, միշտ կենսունակ, միշտ երիտասարդ « Բազմավէպ »ին։

Ուղիղական յարգանքով
Ձերդ՝ ԱՆԱՑԻՍ

---

dott. ing. comm. MARIO GAI
a r c h i t e t t o

Roma 14 Ottobre 1947.

Car.mo e Rev.mo P. Mesrob.

Sua Eccellenza il Padre Generale con molta amabilità mi ha invitato ad assistere alle feste centenarie del « Pazmaveb ».

Tornare per qualche giorno nella serena tranquillità di S. Lazzaro in mezzo ai Padri ai quali sono legato da sincera ed affettuosa amicizia, mi sarebbe stato infinitamente gradito: ma come con rammarico ho dovuto rispondere alla Eccellenza, un lavoro che deve essere ultimato per fine mese mi tiene aggiogato al mio tavolo e non mi è possibile liberarmi come avevo sperato.

digitised by A.R.A.R.@

Immagino la Vostra fatica per la compilazione del numero straordinario della Rivista che indubbiamente sarà riuscito come gli altri che ho avuto agio di ammirare, un opera veramente ragguardevole per il contenuto e per la veste tipografica; e che porterà per il mondo il verbo della Vostra eroica Patria.

Verrà pure un giorno che ai popoli che hanno avuto fede nel loro destino ed hanno saputo coltivare intatto il culto delle gloriose memorie, sarà dato di tornare liberi sul suolo dei loro Avi ed innalzarvi nuovamente la loro bandiera.

In quel giorno sarà ricordato con gratitudine l' opera che la Congregazione ha svolto indefessamente per mantenere viva questa fede e questa speranza.

Auguro che questo giorno non sia lontano. Dai grandi sconvolgimenti derivano alle volte assestamenti impreveduti.

Tutto è avere fede.

Ing. MARIO GAI

Փարիզ 15 *Հոկտեմբեր* 1947.

Ա. Գերապայծառ Հայր Սրապիոն Վ. Ուլուհոճեան
ընդհանուր Ս. Բրայ Մխիթարեան Միաբանութեան
Վենետիկ

Գերապայծառ Հայր,

Այդ հարիւրամեակը զոր այս օրերս պիտի տօնէք ուրախութիւն և յոյս կը պատճառէ բոլոր մտաւորականներուն։ Անհերքելի ապացոյց մըն է որ այս նիւթապաշտ և վայելասէր դարուն մէջ կարելի է տակաւին բարձր գաղափարներ մշակել։ Եւ բոլոր Հայութիւնը կրնայ պարծիլ Մխիթարեան Միաբանութեամբ և անոր ձեմարանով։

Այս դարադարձը մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ նոյնիսկ արեւմտեան ազգերուն մէջ հազուագիւտ են այն բանասիրական հանդէսները, որոնք այսքան հին են և այսքան արդիւնաւոր։ Մէկ դար ամբողջ կազմակերպիչներ գտնել, աշխատակիցներ ունենալ և կարդացողներուն հետաքրքրութիւնը շարժել պարբերաթերթով մը կը նշանակէ անխնայ հիգեր թափել և միշտ բարձրորակ գիտութիւն պահել։

Միայն այն ձեմարանը որ Հայկազեան լեզուին նոր բառգիրքը հրատարակեց և հանրօգուտ և բազմարդիւն ուսումնասիրութիւններ ընծայեց գիտնականներուն՝ կարող էր այնքան յաջողութիւն գտնել բազմութեան քով, այնքան վստահութիւն և համակրանք ստեղծել ժողովուրդին մէջ։

Շնորհաւորենք ուրեմն Մխիթարեան Միաբանութիւնը որ «Բազմավէպ»ը հիմնած ու յառաջ տարած է, շնորհաւորենք Հայ ժողովուրդը որ «Բազմավէպ»ին արժէքը գնահատած է։

Հաճեցէք, Գերապայծառ Հայր, ընդունիլ իմ ամենաջերմ մաղթանքներս «Բազմավէպ»ին բազմադարեան յաջողութեան համար։ Ձեր սուրբ աջը համբուրելով

կը մնամ

ՖՐԻՏ. ՖԻՑՏԻ

ԾԱՆՕԹ. — Պր. Ֆրէտէրիք Ֆէյտի հայագէտ-ֆրանսացի, հեղինակ հայերէն լեզուի քերականութեան մը, և ներկայիս Ուսուցիչ Ֆրանս. լեզուի Սեւրի մեր Մուրատեան Վարժարանին մէջ։ Հոս հրատարակուած այս հայերէն նամակը շարադրուած է իր իսկ ձեռքով։

ԽՄԲ.

Ժընեւ, 15 *Հոկտեմբեր* 1947.

Մեծարգոյ Ցանձնախումբ
«Բազմավէպ»ի հարիւրամեայ յոբելինական հանդէսներուն
Ի Ս. Ղազար, Վենետիկ

Ի պատասխան Ձեր պատուական հրաւէրին՝ ներկայ գտնուելու «Բազմավէպ»ին յոբելինական հանդէսներուն, նախ և առաջ հաճեցէք ընդունիլ խորին շնորհակալութիւններս։ Ցերմօրէն պիտի փափաքէի այդ օրը Ձեր մէջ ըլլալ և մասնակցիլ մեծ հանդէսին, որ ամէն հայ սրտի համար առիթ մըն է բերկրանքի և հպարտութեան. բայց կը ցաւիմ որ մի միայն հեռուէն ստիպուած եմ կատարել Մխիթարեան Ուխտին անձնուէր բարեկամի նուիրական պարտականութիւնը՝ որ է միացնել իմ ձայնը այն բոլոր բարեմաղթութեանց շարքին, որոնք Ձեզի պիտի ուղղուին հանդէսին առթիւ։

Թէ որչափ մեծ է «Բազմավէպ»ի արժանիքը գրական և ազգային ասպարէզին վրայ, աւելորդ է յիշել։ Կը մաղթեմ ջերմօրէն որ այդ Հանդիսարանը, Մխիթարեան հոյակապ Միաբանութեան պարծանքներէն մին, դեռ երկար տարիներ փայլի հայ մտաւորական ասպարէզին վրայ։

Տասնեւմէկ տարի առաջ շքեղ հանդէսներով տօնեցիք Մ.-Ռ. վարժարանի հարիւրամեակը։ Այսօր կը տօնէք «Բազմավէպ»ի դարադարձը։ Որչափ անխոնջ աշխատանք և որչափ անձնուիրութիւն Մխիթարեան Հայրերուն։

Հաճեցէք ընդունիլ, վերապատուելի Հայրեր, խորին յարգանքներս և սրտագին բարեւներս։

Տոքթ. Շ. ՓԻԼՈՍԵԱՆ

Նիս 17 *Հոկտեմբերի* 1947.

Նորին Սրբազնութեան Վենետկոյ Միաբանութեան
Ընդհանուր Աբբահօր Ողջունեալ Արքեպիսկոպոսին
Ի Վենետիկ

Բազմավաստակ Միաբանութիւնդ, ու Ձեզ՝ արժանի, և մեծայարգոյ Աբբահօրդ ողջունում եմ «Բազմավէպ»ի հարիւրամեայ տօնախմբութեան առիթով, ու մաղթում եմ, որ Միաբանութիւնդ կարողանայ և ապագայում կատարել այն մեծ դերը մեր Ազգի կեանքին մէջ, ինչպիսին նրան վիճակուեց խաղալ մեր բազմակողմանի մշակոյթի վերածնութեան գործում մինչեւ հիմա։

Ցանկանում եմ երկար, երջանիկ օրեր վաստակաւոր Միաբանութեանդ, ու Ձեզ, Սրբազան Տէր, ու համբուրում եմ Ձեր աջը, մնալով Ձերդ Սրբազնութեան

Խ. Ծ.

ԻՇԽԱՆ ԲՕՐԻՍ ԵՐԿԱՑՆԱԲԱԶՈՒԿ ԱՐՔՈՒԹԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ազոլո 17 Հոկտեմբեր 1947.

Ա. պատ. խմբագրուհին
«Բազմավէպ»ի – Վենետիկ

«Բազմավէպ»ի Հարիւրամեակին տօնախմբութեան ներկայ չի գտնուիլս – պատճառները ծանօթ են – իսկապէս ինծի ցաւ է։

Նախ և առաջ՝ քանզի ազգային ցնծութիւն մ'է՝ մէկ դարի քաջահանդէս յաղթանակ մը, ուր փայլեցան Մխիթարեան կարկառուն դէմքեր։

Երկրորդ որ, 1889 թուականին, անոր էջերուն մէջ գրական աշխարհին առաջին անգամ ծանօթացայ «Հրաժեշտ առ Վենետիկ» ոտանաւորովս՝ գրաբառ։

Այդ թուականին, եթէ չեմ սխալիր, անոր խմբագրապետն էր բարեյիշատակ բաբեկամս. Հ. Յովհաննէս Թորոսեան, որուն հետ, յաջորդ տարին, Հռովմի մէջ պիտի հանդիպէի, երկուքնիս ալ ուսանող։

Հ. Սամուէլ Գանթարեանին աշակերտը, այս եղանակով, կարճ ժամանակի մը համար ուրեմն, կը հեռանար Իտալիայէն։

Անցան, ուստի, այդ հարիւրին գրեթէ վաթսուն տարիները և դեռ կ'ապրիմ. գոնէ բախտը ունենալու համար անոր մաղթել արդիւնաշատ երկրորդ շրջան մը՝ նախորդին հաւասար փայլուն և ազգօգուտ։

Մնամ յարգանօք տեսչութեանդ

ԼԵՒՈՆ ԿԻՒՐԵՂԵԱՆ

Anvers (Belgique) 18 Octobre 1947.

Au très Révérend Père Mekhitariste
Saint Lazare Venise (Italie)

En ce jour où avec orgueil, nous fêtons tous le centenaire de « Pazmaveb » il m'est un plaisir très grand de pouvoir apporter à cette fête jubilaire, la voix d'un ancien élève Mékhitariste qui de même que son père, a trouvé auprès de cette magnifique institution religieuse, la source et la lumière de notre patrimoine littéraire et artistique. Nos yeux se tournent ce soir vers vous, vers le magnifique Couvent de l'Ile St. Lazare, et dans nos cœurs chantent avec les inoubliables versets littéraires, les magnifiques écrits de nos illustres et immortels Pères Mékhitar, Pagradouni et Alichan.

Grâce à « Pazmavep », leurs œuvres ont été à la porté de tout notre peuple.

En ce jour de fête et de tout cœur avec vous je forme les vœux les plus sincères et mes souhaits les plus respectueux aux RR. Pères Mékhitaristes et à son Directeur. Grâce à eux et à leur noble travail il est permis aujourd'hui de fêter devant le monde entier, le Centenaire de « Pazmavep ».

Qu'il plaise à Dieu, de lui prêter une longue vie. Recevez, je vous prie, les vœux et les souhaits d'un ancien élève qui reste et restera comme son illustre père, Jean Savayan, un Mékhitariste fidèle et ardent.

Respectueusement

R. SAVAYAN
artiste-peintre

Ընթանպուլ, 20 Հոկտեմբեր 1947.

Ա. Մեծայարգ և պատկառելի, պատուարժան Մխիթարեան
Միաբանուհրիւն Սուրբ Ղազարու ի Վենետիկ.

Սուրբ Միաբանութեանդ հովանւոյն ներքեւ ի լոյս ընծայուած «Բազմավէպ» ամսօրեայ հանդէսի հրատարակութեան հարիւրամեակը ինձ կը վերյիշեցնէ քաղցր անցեալ մը, յորում, Իւսկիւտար (Պոլիս), Սելամիյէ Թաղի Սուրբ խաչի վարժարանը, վարժապետնիս՝ հոգելոյս հռետոր Պուէտ Խաչատուր Միսաքեան՝ կը կրթէր հոգելոյս ողբացեալ Եղբայրս՝ Վահրամ Յ. Թորգոմեանը (յետագային տոքթէօր), Յարութիւն Մրմրեանը, Մելգոն Կիւրճեանը, զայլս և զանձս ի Հայ ոսկեղինիկ մատենագրութիւնը, մեր աչացն առաջը գնելով՝ Միաբանութեանդ հոգելոյններուն, նա մանաւանդ Հարց՝ Ալբէն Բագրատունիի և Եդուարդ Հիւրմիւզի, հռետորն գրչերու հեղինակութիւնները, ընդ որս հանրանուէր «Բազմավէպ»ները, որոնց ընթեռնուլն ու մեր մտացը մէջ փոխադրելը, մեզ ամենուս մեծ երջանկաւէտ և հաճոյալի վայելքն էին։

... «Բազմավէպ»ի բոլորած՝ Հարիւրամեայ մշակութային բեղմնաւոր, բոլորանուէր վաստակին խորհրդաւոր ոգիին, համեստ և խոնարհ շնորհաւորութիւններս յայտնելով՝ անոր բոլոր ազգանուէր աշխատակիցներուն, երկար և յաջող յարատեւութիւններ կը բարեմաղթեմ։

Հանգիստ հոգւոյը՝ առյաւէտ անդարձ՝ Մխիթար Ալբայ Հօրը, անոր յաջորդ Ալբայ հարցը, Միաբանութեան Ուխտի Հոգեւորականացը, «Բազմավէպ»ը յղացողներուն, անոր առաջնորդ հանդիսացողներուն և աշխատակիցներուն։

Խորին յարգալիր զգացմամբ

ԳԷՈՐԳ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

Հիմնադիր և Նախկին տնօրէն և Ուսուցչապետ Պուրսայի (Թուրքիա)
Շերամագիտական Ուսումնարանի (Institut Sericicole):
Նախկին Ատենապետ ազգային կեդրոնական վարչական ժողովոյ։

«Բազմավէպ»ի Հարիւրամեակին առթիւ

Հայոց նոր օրերու պատմութիւնը ոսկեգրուագ յիշատակութեամբ պէտք է արձանագրէ իր սրբազան էջերուն մէջ «Բազմավէպ»ի հարիւրամեակը։

Ամբողջ դար մը հայ բարբառին շքեղ նշանները ծաղկեցան թուղթին վրայ, փոքրիկ կղզիի մը մէջ՝ ուր միշտ վառ մնաց երկնաշող ճրագը Սիրոյ ու Հաւատքի և զոր իրենց մաքրաջերմ շունչով արծարծեցին հայրենասէր ճշմարիտ առաքեալներ։

Սբ. Ղազար կղզեակին հողն կարծես հողը էր Ալբարատեան դաշտին, որուն խնկաբոյր փոշին եկած ինքած էր հոն՝ ծիրանեվառ խորհուրդին հետ դիւցազուններու, արիւնին և արցունքին հետ նահատակներու և սուրբերու։

Այսօր շքեղ կառոյց մը կը բարձրանայ, անխոնջ Աշխատանքի և Անձնուիրման կոթող մը, որուն չպիտի կարենայ մօտենալ երբեք ժամանակը իր քանդիչ սլաքներով։

Հայ ոգին կը հսկէ միշտ, դարաւոր շարշարանքի և աստուածային ստեղծագործութեան դրոշմը դնելով անջնջելի գեղեցկութեամբ՝ մագաղաթին և քարին վրայ։

digitised by A.R.A.R.@

Հայ ոգին արթուն է միշտ, ինչպէս արթուն էր երէկ խաղաղաւէտ կամարներուն տակ ստուերամած։

Անոր փառապանծ յաղթանակին տօնն է այսօր։

Հայոց Աշխարհի ծաղիկներուն, հայոց բարբառի մեղեդիներուն, հայոց անմահ բանաստեղծներուն լուսահանդէս Առաւօտն է բացուեր Սբ. Ղազարի վանքին մէջ։

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

Ai Rev. Padri Mechitaristi di S. Lazzaro

Invio a Voi, illustri e carissimi Padri della venerabile Congregazione Mechitharista di Venezia, le più sentite congratulazioni nella solenne circostanza della celebrazione del centenario del «Pazmaveb», la rivista polyhistore, in cui raccogliendo ed illustrando la scienza dei vostri antenati e il meglio della coltura europea, avete sempre dato un cospicuo contributo alla propaganda intellettuale tra il vostro popolo vicino e lontano, mantenendo la coscienza della sua unità. Formulo i più fervidi voti che Voi, eredi dello spirito apostolico di quella grande mente dalle larghe vedute, che fu l'Abbate Mechithar, *fortemente e soavemente disponendo ogni cosa,* possiate riuscire oltre che alla coltura ed elevazione del vostro popolo, alla tanto auspicata unione delle chiese, e a quella degli spiriti d'occidente e d'oriente, ben consapevoli, Voi ministri del Verbo, che dove c'è disunione, ivi c'è odio e tenebra; ma dove c'è unione, ivi domina la carità e la luce!

aff.mo
prof. ALMO ZANOLLI
libero docente di filologia armena
Università di Padova

Ի ՏԷՐ ԷԼ ԶՕՐ 22 Հոկտեմբեր 1947.

Արգոյ և պատուական Հայր Մեսրոպ Վ. Ճանաշեան
խմբագրապետ «Բազմավէպ» աւետարերի Ի Մ. Ղազար

Հաճեցէք արգոյ Հայր ընդունիլ և հաղորդել Գերապայծառ Աբրահոր և բոլոր Մեծարգոյ հայրերու իմ սրտագեղ մաղթանքներս Ձեր «Բազմավէպ» ազգօգուտ ուսումնասիրաւալ և հայրենասէր թերթին Հարիւրամեայ ոսկեդեղնիկ Յոբելեանին առիթով. կեցցէ «Բազմավէպ»ը, թող շարունակէ թրթռացնել իւր քաղցրիկ թելերը երգելով հայ սրբութիւնները, հայ ոգին և հայ հայրենիքը, թող պանծացնէ ցմիշտ հայրենիքի մեղի հասած նշխարները, ուղեցոյց ըլլայ ճշմարիտ հայրենասիրութեան։ Մաղթելով Ձեզ և «Բազմավէպ»ին ապագային ալ անմահ գործունէութիւն, որուն համար աղօթող եմ միշտ։

Մնամ խորին մեծարանաց հաւաստեօք և աղօթիւք Արգոյ Հայրութեանդ

ԱՆԴՐԷԱՍ Վ. ԱՀՄԱՐԱՆԵԱՆ
Ժ. Կ. Հ. Ի ՏԷՐ ԷԼ ԶՕՐ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ

Alessandria 14 Ottobre 1947.

Cordialmente partecipiamo diamante giubileo «Pazmaveb» augurando prosperi centenari vantaggio cultura armena.

PADRI-ALUNNI
(Մխիթ. Վարժարանի)

Alessandria 15 Ottobre 1947.

Associo gran cuore celebrazione fausto centenario «Pazmaveb» augurando prosperità per grandiosa opera pro rinascimento cultura nazionale.

LEON MATOSSIAN

Beyrouth 15 Octobre 1947.

Centenaire «Pazmaveb» félicitations au nom Université saint Joseph

MECERIAN

Alexandrie 16 Octobre 1947.

Je m'associe cordialement profond respect centenaire «Pazmaveb» gloire couronne culture arménienne meilleurs voeux.

DIKRAN BALIAN

Sèvres 16 Ottobre 1947.

Direzione ex alunni partecipano con gioia centenario «Pazmaveb» augurando altri lustri come faro della nazione.

Direzione Collegio MOORAT

Roma 16 Ottobre 1947.

Formulo migliori voti per feste centenario «Pazmaveb» cui mi sento presente spiritualmente ossequi.

MAINARDI LAURO

Plovdiv 16 Octobre 1947.

Félicitations centenaire meilleurs voeux.

PERES MEKHITHARISTES

Torino 16 Ottobre 1947.

Dolente essere assente partecipo tutto cuore festeggiamenti centenario gloriosa rivista «Pazmaveb».

Der STEPANIAN

Cairo 16 Ottobre 1947.

Gli allievi Cairo collegio Moorat Raphaël mandano alla redazione in occasione del centenario mensile «Pazmaveb» felicitazioni sincere e fervidi voti d'un immensa prosperità che ha sparso tutto un secolo luce e fede nella gioventù della nazione.

Riconoscenti

Maître AGHAZARM-STEPHAN PILIBBOSSIAN - Maître DURGUERIAN - Docteur MISSAKIAN - Docteur BEDROS PILIBBOSSIAN - Ingénieur ORAK - AGOP KUMROUYAN - STEPAN MOURADIAN

Alessandria 17 Ottobre 1947.

Partecipiamo feste centenarie «Pazmaveb» alunni Boy-scouts Mechitaristi viva Congregazione Mechitarista.

HOVHANNESSIAN

New York 17 Octobre 1947.

Serdakin maghtank «Pazmaveb»i hopelianin.

DIKRAN MGOONT

Wien 17 Octobre 1947.

Vive reconnaisance et ardents souhaits de vie eternelle à la plus ancienne revue arménienne représentante séculaire et particulièrement émérite de la culture des arts et des recherches historiques de notre nation - vive «Pazmaveb» vive vive.

Union arménienne en

AUTRICHE - WIEN

digitised by A.R.A.R.@

Philadelphia 17 Octobre 1947.

Hearty congratulations St. Marks parish and clergy solemn occasion célébration jubilée.

Rev. STEPANIAN and Rev. KALAJIAN

Wien 17 Octobre 1947.

Félicitations sincères occasion centenaire par l'âge orgueil des périodiques arméniens par l'activité phare de culture arménienne.

CONGREGATION MEKHITARISTE

Alexandrie 17 Octobre 1947.

Meilleures félicitations pour heureux jubilé d'or « Pazmaveb » souhaits longue prospérité pour diffuser science et lumière intellectuelle au sein de la Congrégation Mékhitariste.

OHANES KADIFIAN

Beyrouth 17 Ottobre 1947.

Auguro secoli di vita nazionale prosperosa alla Congregazione e « Pazmaveb ».

BARKEVE MARIMIAN

Beyrouth 17 Ottobre 1947.

Hay mamouli yeritzakuynin yertchanik nor tarer mer mechaguytin odjakhin dzarayelou.

WAHE SETHIAN

Gardone Riv. 17 Ottobre 1947.

Impossibilitato venire mando Congregazione calorosi auguri centenario.

GREGORIO SCILTIAN

Torino 17 Ottobre 1947.

Fervidi auguri centenario fondazione rivista « Pazmaveb ».

Famiglia TASGIAN

Galata 17 Octobre 1947.

Retenu par maladie souhaitons eternelle prospérité votre sainte mission. Marmara consacra numéro commémorant centenaire.

CHAMLIAN

Cairo 17 Ottobre 1947.

Félicitons centenaire et souhaitons nouveaux succès dans domaines culturelles et linguistiques.

Journal « AREV »

Milano 17 Ottobre 1947.

Causa imprevista impossibilitato assistere feste commemorative « Pazmaveb » invio congratulazioni e fervidissimi auguri per l'avvenire.

GHAZAROSSIAN

Alessandria 18 Ottobre 1947.

Giubilante centenario glorioso, come presente sentitissimi auguri, successo maggiore.

ANSURIAN ex alunno

Alep 18 Octobre 1947.

Père, élèves Collège Mékhitariste Alep partécipons joyeusement Centenaire Revue « Pazmaveb » honneur notre Congrégation gloire culture arménienne vœux d'un second centenaire.

DIRECTION

Alexandrie 18 Octobre 1947.

Sincères félicitations occasion diamant centenaire Revue précieuse gloire intellectuelle arménienne.

MARDIG ZARBHANELIAN

Rio de Janeiro 18 Ottobre 1947.

Felicitazioni prosperità vita centenario « Pazmaveb » desidera colonia armena cattolica.

Padre DAVIDIAN

Alexandrie 18 Octobre 1947.

Cordiales félicitations occasion jubilé centenaire souhaits prospérité activité féconde culture arménienne.

CHOUCRY BALIAN

Merano 18 Ottobre 1947.

Impossibilità partecipare alla commemorazione del centenario felicitazione Congregazione Mechitarista.

Devotissimo GIANIGHIAN

Paris 18 Octobre 1947.

Gloire œuvre accomplie de cent ans.

CH. NARTHOUNY

Paris 18 Octobre 1947.

J'admire culture mékhithariste.

ZWARTNOTZ

Galata 18 Octobre 1947.

Félicitons cordialement votre centenaire souhaitant meilleur avenir prospérité.

Rédaction « JAMANAK »

Cairo 18 Ottobre 1947.

Haruramia « Pazmaveb » in antaram yeridasartoutioun iev park Miapanoutian.

KAHIREI HAI MECHAGOUTAIN

Milano 18 Ottobre 1947.

Felicitazioni vivissime per centenario rivista « Pazmaveb » augurando fortuna continuazione.

GARABED ACHDJIAN

Paris 18 Octobre 1947.

Rédaction « Arevmudk » et union des arméniens Cilicie envoient chaleureuses félicitations pour centenaire revue « Pazmaveb ».

COUYOUMDJIAN

Fribourg 19 Octobre 1947.

Haygagan parparov chenorhavorem « Pazmaveb »i hopeliane asvazayin orhnoutiun hayzelov achekhadavoraz hantissaganaz.

NALBANDIAN VARTABED
Université Fribourg

Boston 19 Ottobre 1947.

Hairenik extends warm felicitations on hundredth anniversary «Pazmaveb».

« HAIRENIK »

Milano 19 Ottobre 1947.

Impossibilitata presenza commemorazione centenario « Pazmaveb » partecipiamo con pensiero nella più fausta ricorrenza della nostra storia letteraria.

MIMIDIAN - OSGHIAN
FOUNDOUKIAN

ԵԱՆՕԹ. – Հասած են մեզի շնորհաւորական ուրիշ նամակներ ալ, որոնք յաջորդ Թիւին մէջ պիտի հրատարակուին։ ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@